ԾԱՆՈՒՑՈՒՄ
ՍԱՆ ԳԱԲՐԻԵԼԻ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀՈՎՏԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ
ՆԱԽԱԳԻԾ NO. 2023-003982-(SD1, 5)
ՆԱԽՆԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾ NO. RPPL2023005880
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾՐԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ NO. RPPL2023005882
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ NO. RPPL2024002630
ԳՈՏԻՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ NO. RPPL2023005883
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ NO. RPPL2023005884
ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ NO. 2023110351

Լոս Անջելեսի Շրջանի («Շրջան») Տարածքային Պլանավորման Հանձնաժողովը («Հանձնաժողով») կանցկացնի հանրային լսում՝ քննարկելու Շրջակա Միջավայրի Վրա Ազդեցության Եզրափակիչ Հաշվետվությունը (“FEIR”) և ստորև ներկայացված նախագիծը: Նախագծի մասին կներկայացվի պրեզենտացիա և ընդհանուր ակնարկ, և ցանկացած հետաքրքրված անձ կամ լիազորված ներկայացուցիչ կարող է մասնակցել լսմանն ու լսման ընթացքում մեկնաբանություններ անել նախագծի վերաբերյալ: Մասնակցության դեպքում դուք կունենաք ելույթ ունենալու հնարավորություն կամ կարող եք գրավոր ներկայացնել ձեր կարծիքը միջոցառման կազմակերպչին՝ ստորև նշված հասցեով կամ առձեռն՝ հանրային լսման ընթացքում: Եթե այս առաջարկի վերաբերյալ վերջնական որոշումը քննարկվի դատարանում, ապա կարող են քննարկվել այն հարցերը, որոնք բարձրացվել են նախքան հանրային լսումը կամ հանրային լսման ժամանակ:

ԼՍՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ՝ 2024թ. սեպտեմբերի 25՝ առավոտյան 9:00:

ԼՍՄԱՆ ՎԱՅՐԸ՝ Գրանցումների Սենյակ (Hall of Records), 320 West Temple փողոց, Սենյակ 150, Լոս Անջելես, Կալիֆորնիա 90012. Առցանց՝ bit.ly/ZOOM-RPC: Հեռախոսով՝ (669) 444-9171 կամ (719) 359-4580 հեռախոսահամարներով (ID: 858 6032 6429): Այցելեք lacdrp.legistar.com/Calendar.aspx և ընտրեք լսման օրը՝ հավելյալ տեղեկությունների համար:

ՆԱԽԱԳԾԻ ՎԱՅՐԸ՝ Altadena, East Pasadena-East San Gabriel, Kinneloa Mesa, La Crescenta-Montrose, San Pasqual, South Monrovia Islands, South San Gabriel, Whittier Narrows և South El Monte կղզու չմիավորված համայնքներ:

ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝ Առաջարկվող Սան Գաբրիելի Արևմտյան Հովտի Տարածքային Ծրագիրը (Տարածքային Ծրագիր կամ Նախագիծ) Ընդհանուր Ծրագրի ընդլայնում է, որն անդրադառնում է Սան Գաբրիելի Արևմտյան Հովտի Պլանավորման Տարածքի 9 չմիավորված համայնքների առանձնահատուկ կարիքներին և բնութագրերին: Տարածքային Ծրագիրն ուղղված է բարելավելու, ուղղորդելու և աջակցելու այս համայնքների շարունակական աճին, զարգացմանն ու պահպանմանը: Տարածքային Ծրագիրը ներառում է տարածաշրջանին հատուկ

նպատակներ և գործողությունների ծրագրեր հողօգտագործման, տնտեսական զարգացման, շրջակա միջավայրի և բաց տարածքների պահպանության, ազատ տեղաշարժի, հանրային ծառայությունների և հաստատությունների ամրապնդման, ինչպես նաև պատմական ժառանգության պաշտպանության վերաբերյալ: Տարածքային ծրագիրը նաև ներառում է համայնքին հատուկ նպատակներ և գործողությունների ծրագրեր: Բացի այդ, Տարածքային Ծրագիրը ներառում է տարածաշրջանին և համայնքին հատուկ գործողություններ: Նախագծի շրջանակում առաջարկվում են գոտիավորման և հողօգտագործման քարտեզների փոփոխություններ՝ գոտիավորման և հողօգտագործման ծրագրերի համապատասխանեցման, բնական ռեսուրսների պահպանման, վտանգավոր տարածքներում շինարարության սահմանափակման, խոշոր կանգառների և մայրուղիների հարակից տարածքներում բնակչության աճի և տարբեր նպատակներով հողօգտագործման զարգացման և Բնակավայրերի Վերազոնավորման Ծրագրի իրականացման համար: Նախագիծը ներառում է գործող կարգադրությունների փոփոխություններ՝ Տարածքային Ծրագրի նպատակների և գործողությունների իրականացման համար, ինչպես նաև տարածաշրջանային նոր չափանիշներ, ինչպես նաև գործող չափանիշների վերակազմակերպում և թարմացումներ: Նախագծի համար պատրաստվել է նաև պատմական համատեքստով հայտարարություն, որը կցված է Տարածքային Ծրագրին:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ: Որպես Կալիֆորնիայի Շրջակա Միջավայրի Որակի Մասին Օրենքի («CEQA») ապահովման առաջատար գործակալություն՝ Շրջանի Տարածքային Պլանավորման Հանձնաժողովը կվերանայի Շրջակա Միջավայրի Վրա Ազդեցության Ծրագրային Հաշվետվության (“EIR”) վավերացումը, որը ներառում է Շրջակա Միջավայրի Վրա Ազդեցության Եզրափակիչ (“FEIR”) և Նախնական (“DEIR”) Հաշվետվությունները: Բացի այդ, Հանձնաժողովը կդիտարկի Շրջանի Բացասական Ազդեցությունների Մեղմացմանն Ուղղված Գործողությունների Մշտադիտարկման և Ձեկուցման Ծրագրի («MMRP»), CEQA-ի Փաստերի Հայտնաբերման և Գերակայության Դիտարկման մասին Հայտարարության ընդունումը: FEIR-ը կներկայացվի հանրության վերանայմանը հանրային լսումից առնվազն 10 օր առաջ (Կալիֆորնիայի Կարգավորումների մասին Օրենք, Գլուխ 14, Բաժին 3 ss 15089(բ)):

ՆԱԽԱԳԾԻ ՆՅՈՒԹԵՐԸ: Նախագծի փաստաթղթերը, ներառյալ Սան Գաբրիելի Արևմտյան Հովտի Տարածքային Ծրագիրը, կարգադրությունը և Եզրափակիչ EIR-ը, հասանելի կլինեն առցանց հետևյալ հղմամբ՝ planning.lacounty.gov/long-range-planning/wsgvap/documents/: CEQA-ի ծանուցումները նույնպես հրապարակվում են այստեղ՝ planning.lacounty.gov/environmental-review/public-notice/.

Եզրափակիչ EIR-ի տպագիր օրինակը հասանելի կլինի նախնական ամրագրմամբ՝ սովորական աշխատանքային ժամերին Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Պլանավորման Վարչության Գլխամասային Գրասենյակում (320 W. Temple փող., 13-րդ հարկ, Լոս Անջելես, Կալիֆորնիա 90012): Նախագծի նյութերի, ներառյալ Եզրափակիչ EIR-ի տպագիր օրինակները հասանելի կլինեն նաև Սան Գաբրիելի Արևմտյան Հովտի որոշ հանրային գրադարաններում և Տարածքային Պլանավորման Վարչության Սան Գաբրիելի Հովտի Տարածքային Գրասենյակում: Այցելեք

planning.lacounty.gov/long-range-planning/wsgvap/documents/՝ գրադարանների և տարածքային գրասենյակների հասցեներին և աշխատանքային ժամերի ցանկին ծանոթանալու համար: DRP-ի կողմից ստացված ամբողջ նամակագրությունը համարվելու է հանրային փաստաթուղթ:

Այս նախագծի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք դիմել Համայնքային Հետազոտությունների Արևելյան Բաժին (Community Studies East Section)՝ wsgvap@planning.lacounty.gov էլ . հասցեով, (213) 974-6427 հեռախոսահամարով կամ փոստով՝ Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Պլանավորման Վարչություն (DRP)՝ 320 W. Temple փող., 13-րդ հարկ, Լոս Անջելես, Կալիֆորնիա 90012 հասցեով:

Եթե ձեզ անհրաժեշտ են հարմարանքներ կամ օժանդակ միջոցներ, խնդրում ենք դիմել Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների մասին Օրենքի (ADA) Համակարգողին՝ (213) 974-6488 (Ձայնային) կամ (213) 617-2292 (Հեռատիպ/TDD) հեռախոսահամարներով՝ հայտնելով այդ մասին առնվազն 3 աշխատանքային օր առաջ: